



ԱՒԵՏԱԲԵՐ

Բ. ՏԱՐԻ

ՀԱՂԷՊ, 15 ՅՈՒՆՈՒԱՐ, 1929

ԹԻՒ 2

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ԿՐԾՆՔԻՆ ՀԻՄՆ (1)

Ի՞նչ է Կրօնքին հիմը: Կրօնական խնդիրներու մասին ի՞նչի վրայ պէտք է հաստատենք մեր անձնական մտածումները: Բուն հարցը այս է. ի՞նչ է կրօնքի գոյութեան կամ ուէ մէկուն կրօնական ըլլալուն պատճառը: Երկիրներ կան, ինչպէս Ռուսիա, և գիտական կարգ մը չըջնականներ կան, ուր այս հարցը շատ սուր հանգամանք մ'առած է. և յաճախ պատասխանը ժխտական է:

Ուէ խորհող մարդու մը համար ա՛յլ ժամանակը անցած է ըսելու թէ իր կրօնքին հիմը որոշ ցեղի մը կամ ազգութեան մը պատկանելուն մէջ, կամ կարգ մը հաւաքական ծիսակատարութիւններու, ընկերային սովորութիւններու հրպատակելուն մէջ կը կայանայ: Սյսպիսի մտայնութիւն մը տգիտութեան օրերուն կը պատկանի: Մենք այսօր այնպէս կ'ըմբռնենք թէ կրօնքը ներքին բան մ'է, և երբ հարցնենք թէ այս ներքին կրօնքին հիմը ի՞նչ է, այս ներքին կեանքին ընդունելի պատասխան մը պէտք է գտնուի:

1. Այս հարցումին շատ սովորական մէկ պատասխանը սա է.— կրօնքին հիմը նեղինակութիւն է: Արդարեւ, կրօնքի

և հեղինակութեան գաղափարները շատերուն միտքերուն մէջ իրարմէ այնչափ անբաժանելի են՝ որ անոնք պարզապէս կրօնքի մէջ հեղինակութեան գիրքին, անոր ի՞նչ կամ ո՞վ ըլլալուն մասին հարց կ'ունենան: Իբր վերջնական սկզբունք հեղինակութեան իրականութիւնն ու գիտակցութիւնը խնդրոյ առարկայ չեն ըլլար:

Հեղինակութիւնը այն մեթոտն է որով ծնողները կը վարուին իրենց մանուկներուն հետ. և Աստուած մեզի հետ իբր մանուկներ կը վարուի: Հեղինակութիւնը կառավարութեան մեթոտն է, զոր իր հպատակներուն համար կը գործածէ, և Աստուած մեր իշխանն է: Հեղինակութիւնը ուսուցչին գործածած մեթոտն է տղաներու կրթութեան համար, և մենք պէտք է խոստովանինք մեր տգիտութիւնը: Բոլոր ասոնք կրօնքի մէջ հեղինակութեան սկզբունքը փաստել կը թուին. նաև հեղինակութեան անունով տրուած կրօնական դատարարակութիւնը շիտակ կրնայ ըլլալ: Հեղինակութեան անունով կատարուած ուսուցումին ճշմարտութիւնը խնդրոյ առարկայ չէ. բայց իրաւունք ունինք հարցնելու թէ հեղինակութեան մեթոտին վերջնական ըլլալու գաղափարը ճիշտ է: Ծնողները կը յուսան որ ի-

րենց մանուկները մեծնան: Ինքնավարութիւնը՝ պետութեան մասին մեր գաղափարական է: Մենք կը խորհինք որ տղէտները պէտք է դաստիարակուին:

Այս խնդիրներու նկատառումը մէկ կողմ թողով կ'ըսենք՝ թէ կրօնքը հեղինակութեան վրայ հաստատուած նկատուիլը մեծ և յայտնի վտանգներն ունի:

Ա. Տարակոյս.— Ոորհող մարդերը պիտի հարցնեն թէ հեղինակութեան հիմը ի՞նչ է, և թէ հեղինակութեն արտայայտուած գաղափարները արդիօք շիտակ են: Անոնք հեղինակութեան յայտարարութիւնները կտրորէն չպիտի ուզեն ընդունիլ: Եւ ի՞նչ այս յայտարարութիւնները չեն համաձայնիր իրենց իրականութիւն նկատածներուն: Կե՛ս հեղինակութեան վրայ անոնց վստահութիւնը պիտի կորսուի:

Բ. Զատապաշտութիւն.— Անոնք որ կրօնական խնդիրներու մասին հեղինակութեան գաղափարները կ'ընդունին խորհելէ պիտի դադարին: Դաւանանքի և վարքի չափանիշները իրենց համար ուրիշներու կողմանէ պիտի պատրաստուին, և իրենց գործը պիտի ըլլայ պարզապէս զանոնք ընդունիլ և հրահանգներու համեմատ շարժիլ:

Գ. Կղերապաշտութիւն.— Կրօնական գործերու հսկողութիւնը անոնց ձեռքը պիտի անցնի՝ որոնք կրօնքի անունով խօսելու և գործելու իրաւասութիւնը ունին: Անոնք պիտի խորհին ժողովուրդին համար: Կրօնական պաշտամունքի զործողութիւնները անոնք պիտի կատարեն ժողովուրդին համար: Եկեղեցական պատմութիւնը մեզի կը ներկայացնէ ոչ միայն այս վտանգներուն գոյութեան մասին շատ մը ապացոյցներ, այլ նաեւ քրիստոնեայ ժողովուրդին մէջ այդ վտանգներէ զերծ չըմնացած շատ մը խմբակներու օրինակներ:

Ժ. է. ՄԻՐԸԼ

ՅՕԴՈՒԱԾՆԵՐ

ՀՈԿԵՒՈՐ ԻՐԵՐԸ ԶԱՆԱԶԱՆԵԼՈՒ ԿԱՐՈՂՈՒԹԻՒՆ

Պօղոս Առաքեալ գեղեցիկ խօսք մը ունի իր Հռովմայեցոց գրած մեծ թուղթին մէջ: Այս համարին նշանակութիւնը մութ մնացած է մեր թէ՛ հայերէն և թէ՛ տաճկերէն թարգմանութիւններուն մէջ: Երկրորդ գլխուն տասնչորս թերորդ համարին մէջ ան կ'ըսէ. «Դուն տարբեր բաներ կը զանազանես»: Համարին բուն նշանակութիւնը հետեւեալն է, «Դուն բարձր, արհիւ, վեհ բաներ կը զանազանես»: Տր. Մօֆաթ իր նոր թարգմանութեան մէջ այսպէս կ'ըսէ. «Դուն ընդունակութիւնն ունիս կրօնքի մէջ կենսական եղողը զանազանելու»: Կենսականը մակերեսայինէն, միջուկը փոճկէն զազազանելու յատկութիւնն է, զոր Առաքեալը կ'ուզէ հասկնել:

Ոսկերիչի մը մատանի մը կը տանիս, որ ոսկիի պէս փայլուն, գեղեցիկ և ծանր է, ամէն կերպով ճիշդ ոսկիի կը նմանի: Ոսկերիչը գայն իր ձեռքը կը տունէ, կը նայի, կը դարձնէ, կը քննէ, և քեզի կ'ըսէ որ ան անխառն ոսկի է, այլ կեղծ է: Երեւութապէս ճիշդ ոսկի է, բայց անոր մէջը ուրիշ մետաղ խառնուած է: Ոսկերիչը իսկականը երեւութականէն զանազանելու կարողութիւնն ունի, որով արժէքը կը գնահատէ:

Այս ճիշդ է կեանքի ամէն մէկ մարդին մէջ: Աշակերտ մը դպրոցին մէջ կը սորվի էականը աւելորդէն զանազանել, և կարեւորը սովորականէն կը զանազանէ և բարձր կ'ընտրէ: Այս պարագան շատ կարեւոր է գիտական կրթութեան մէջ, բայց ա՛յլ աւելի կարեւոր է կրօնական մարդի մէջ: Կրօնքի մէջ շատ կարեւոր հարց մըն է զանազանել ճշմարտը երեւութականէն, կորիզը՝ Կեղեւէն, կենսականը՝ արտաքինէն: Յիսուս ո՛րչափ զարմանալի կերպով ունէր այս

յատկութիւնը: Ի՞նչ խոր թափանցողութեամբ մը Ան կրնար կարեւորագոյնը հասարակէն զանազանել: Մինչ հրեաները իրենքգիրինք բարեպաշտ կը կարծէին օրէնքին միայն տառին պաշտելով, Յիսուս սուր դատողութեամբ մը ցուցուց թէ այդ բարեպաշտութիւնը ո՛րչափ մակերեսային և անկարեւոր է: Ի՞նչ խորունկ իմաստ մը կայ Իր սա խօսքին մէջ. «մարդը շաբաթին համար չեղաւ, այլ շաբաթը՝ մարդուն համար»: Յիսուս ըսել ձգեց թէ առաջ բարեկործութիւնը կուգայ, և ապա շաբաթը յարգելը: Ի՞նչ ուժ լին կերպով պարգեց թէ հոգեւոր կեանքը գիտութենէն բաժրէ, երբ իրեն ներկայացող հրեայ Բաբիլ մը ըսաւ որ «Թէ մարդ մը ջուրէն և Հոգիէն չծնանի, չի կրնար Աստուծոյ թագաւորութիւնը մտնել»: Անառակ Որդիի առակին մէջ ի՞նչ անհերքելի աւրամաքանութեամբ Ան պատկերացուց թէ սէրը ուրիշ բոլոր օրէնքներէն բարձր է, երբ փարիսէիները Օրէնքին պատճառաւ գաղթակցիցան տեսնելով Յիսուսի միասին ճաշիլը ինկածներու և մեղաւորներու հետ: Անառակ Որդիի առակին առանցքն է մեծ աղան և ոչ թէ պատիլը: Այս՝ աւելի մեծ հպարտեղբոր մը առակն է, որ կը նախանձոտի վերադարձող ինկած զաւակի մը վրայ և օրէնքով կ'ուզէ զործել՝ մոռնալով եղբայրական ոգին, քան թէ տունէն փախչող անառակ որդին:

Քրիստոնէութեան պատմութիւնը և անոր ներկայ վիճակը ասոր օրինակներով լեցուն չեն: Հոս չի՞ գտնուիր պատճառը բաժանումի, նոյնիսկ հակառակութեան և վէճի, զոր կը տեսնենք քրիստոնէական եկեղեցիներուն, ընկերութիւններուն և անձերուն միջեւ: Օրէնքի հանգէպ յարգանքը՝ ողորմութենէն, գիտութիւնը՝ հոգեւոր կեանքէն, սէրը՝ օրինապաշտութենէն չկարենալ զանազանել և երկուքն ալ հաւասար

գիտնի վրայ դնել՝ թիրեւս արդիւնքն է օրինապաշտութիւնը, իմաստակութիւնը և տառապաշտութիւնը գերադասելու բարոյթեան, սիրոյ, խոնարհութեան և հեղութեան: Յիսուս յարգեց օրէնքը, բայց գիտցաւ թէ մեծագոյն օրէնքը սիրոյ կանոնն է: Ան զանազանեց ցածը բարձրէն, միջուկը կեղեւէն, կենսականը արտաքինէն:

Ահա մենք քրիստոնեաներս կը կարօտինք այս զանազանելու հոգին: Մեր մտածումները, խօսակցութիւնները, ազօթքները պէտք է այս կենսական բունեւուն շուրջ ըլլան: Մեր շարժումները, միջեղբայրական յարաբերութիւնները պէտք է այս էական կանոնին համեմատ ըլլան: Փոխանակ Աստուծոյ, զրախարի և զժողով մասին միայն հետաքրքութեանցոհացում առնող իմացական խընդիրներով զբաղելու, պէտք է ջանադիր ըլլանք զԱստուծոյ սիրելու և իբրեւ եղբայր մարդերուն ձեռնառն ըլլալու: Կարգ մը դաւանական տարբերութիւններու պատճառաւ հպարտօրէն և իմաստակօրէն ուրիշներու մօտին վճիռ տալէն աւելի, պէտք է խոնարհ և հեղհիով մը իրարու հոգեւոր շինութեան աշխատինք: Յիսուս մեղի կհաւ ոչ թէ նոր դաւանանքի մը՝ այլ նոր ապրիլական երպի մը համար, ոչ թէ նոր գիտութեան մը՝ այլ նոր կեանքի մը համար: Քրիստոնէութեան վերջին խօսքը՝ «եկո՛ւր, վիճաբանի՛նք և հասկցի՛ր» չէ, այլ՝ «եկուր և տես» է: Ահա այս կեանքը այնպէս պէտք է ապրինք որ մարդիկ գայն տեսնեն և տեսնելով Յիսուսի գան: «Ահա այն մարդը»: Յիսուս Իր ամբողջ կեանքովը կայնած է: Ան միշտ կը կենայ խաղաղ հոգիով մը, խորունկ տեսիլքով մը, մեծ սիրով մը: Իցիւ թէ մենք այս գիտնայինք:

Արհմբ

Լ. ԼԵՒՈՆԵԱՆ

ԵԿԵՂԵՑԻՒ ՄԵԾ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐ

2. ՍԱՎՈՆԱՐՈՒԱ

(Շարունակութիւն եւ Վերջ)

Հարածանքի շրջան եւ կիսակիս վախճանը:

Այս ատենները իր անձին գէտ հա-
կառակութիւնը նորէն սկսաւ յառաջ
գալ, ինչպէս որ մեր Տէրոջ կեանքին
մէջ եղած էր, և օրէ օր սաստկանալով
զայն ալ մինչև մահ առաջնորդեց: Լօ-
րէնգօ զայն քաղաքէն դուրս վտարել
խորհեցաւ, բայց կը վարմանար անոր
քաջութեան վրայ, և հասկնալով անոր
ինչպիսի մարդ ըլլալը նոյնիսկ կը հիա-
նար անոր վրայ: Սավօնարօլա երբ
Ս. Մարկոսի վանահայրութեան հրա-
ւիրուեցաւ, ամէն ոք ակնկալեց և նոյն-
իսկ զինքը համոզելու աշխատեցան որ
Լօրէնգոյի այցելութիւն մը տայ և իր
շնորհակալութիւնը յայտնէ անոր: Բայց
այս վանականը հարցուց. «Ու՞ր գիտ հոս
կարգեց, Լօրէնգօ՞ թէ Աստուած», երբ
միւս վանականները ասոր ստիպուած
պատասխանեցին թէ Աստուած է որ
կարգեց, Սավօնարօլա յարեց. «Ուրեմն
ես շնորհակալութիւնս Աստուծոյ կը
յայտնեմ»: Իսկ Լօրէնգօ չկրցաւ չհիա-
նալ իրմէ չվախեցող այս քաջ մարդուն
վրայ: Այս գուքսը երբեմն վանքին
պարտէզը կը պտըտէր և Սավօնարօլայի
հետ տեսակցել կ'ուզէր: Երբ իր առանձ-
նարանին մէջ այս մասին իրեն լուր կու-
տային կը հարցնէր թէ զի՞նքը ուզեց. և
երբ «ոչ» պատասխանէին կ'ըսէր. «ու-
րեմն բարով պտըտի» և կը շարունակէր
իր ուռումնասիրութեան: Երբ իշխանը
վանքին ոսկի դրամ կը նուիրէր Սավօ-
նարօլա զայն աղքատներու համար կը
գործածէր, և «արծաթէ ու պղինձէ
դրամները մեր պէտքերուն բաւեն» կ'ը-
սէր: Վերջապէս երբ այս ազգեցիկ իշ-
խանը տեսաւ որ չպիտի կրնայ իր ազ-
գեցութիւնը տարածել անոր վրայ, թըշ-
նամայաւ անոր, և սկսաւ ասկէ յետոյ

անոր ազգեցութիւնը չէզոքացնելու աշ-
խատիլ: Օր մը Լօրէնգօ կը հիւանդա-
նայ, խիղճը կը նեղէ զինքը, և խոստո-
վանաքի համար Սավօնարօլան կան-
չել կուտայ: Լօրենգօ կը բնակէր շատ
հոյակապ ապարանքի մը մէջ, զոր ա-
մէն տեսակ պիրճանքով զարդարած էր:
Ըն գեղեցիկ արձաններու, գիրքերու,
նկարներու և ուրիշ գեղարուեստական
գործերու մէկ թանգարանը շինած էր իր
տունը: Սավօնարօլա մէջքը չուան մը
կապած, գլուխը գլխանոց մ'առած վա-
նականի տարազով կ'անցնի այդ զար-
դարուն պարտէզներու և սրահներու
մէջէն և կը մտնէ հիւանդին սենեակը:
Դուքսը, իր մահուան անկողին մէջ, իր
մեծագոյն մեղքերէն ոմանք խոստովա-
նեցաւ և վանականէն թողութիւն խնդ-
րեց: Իսկ Սավօնարօլա պահանջեց որ
ան յօժարի աս միջանի պայմաննե-
րուն. —

(1). Տէրը պատրաստ է ներելու եթէ
ապաշխարեա, (2) բայց պէտք է վերա-
դարձնես ուրիշներէն անարդարու-
թեամբ դրամածներդ, (3) և Զլօրէնս քա-
ղաքին պէտք է ետ տաս իր աղատու-
թիւնը, այսինքն հանրապետութիւնը:
Դուքսը այս վերջին առաջարկը չըն-
դունեց, իր կռնակը դարձուց վանա-
կին և առանց թողութիւն ստանալու
անկէ բաժնուեցաւ: Երկու նշանաւոր
անձերու առաջին և վերջին տեսակցու-
թիւնը եղաւ այս: Ասկէ քիչ վերջը Լօ-
րէնգօ մեռաւ, և ժողովուրդը Սավօնա-
րօլայի առաջնորդութեամբ ներքին և
բեափոխական ժողով մը կազմեցին և
քաղքին վարչութիւնը իրենց ձեռքը ա-
ռին: Սավօնարօլա թէպէտ կառավա-
րութեան պետը չէր, բայց մարդերու
սիրտերուն և հոգիներուն վրայ կ'իշ-
խէր: Ամէն բանի համար անոր կը
հարցնէին, ամէն վճռական վայրկեանին
անոր թելադրութիւններուն համեմատ
կը շարժէին: Անոր քարոզներուն շնոր-

հիւ քաղաքին մէջ խաղաղութիւն և կարգապահութիւն կը տիրէին: Չարազործները կը վախճային երևնալու֊ փաղտնեղութիւն մէջ լուծութիւն և ամէն տեղ ապահովութիւն կը գտնուէր: Բացի անոր թշնամիներէ և նախկին հաճոյամոլներէ, նոյնիսկ օժուան շատ աշխարհասէրՊապը միշտ կը հակառակէին այս «արդարութեան քարոզիչին»: Պապ իր տիկնոջը դրամով ծախու առած ըլլալով Սափօնարօլայի որոտանման յարձակումներուն պատճառներ կը պատրաստէր: Վերջապէս կոնգակով մը այս սուրբ վանականը բանազրեալ հուշակեց:

Սափօնարօլա թէպէտ վեցամսուայ չափ իր առանձնարանին մէջ լուռ մընաց, բայց ապա նորէն քարոզելու տոհմնորդուելով՝ Պապի հրամանին գէմընդվեց և նորէն բեմ ելլելով իր հրապարակային գործունէութիւնը շարունակեց: Թէպէտ իր նախկին պերճախօտութեամբը և այժմը կը քարոզէր, բայց յայտնի էր որ իր նախկին ազդեցութիւնը չէր ունենար: Իր թշնամիները բազմաթիւ և ազդեցիկ էին, իսկ իր բարեկամները՝ թէպէտ բարեպաշտ բայց անազդեցիկ: Վերջապէս Պապի կողմանէ զրկուած հաւատաքննիչ մասնախումբ մը ծեր Սափօնարօլան հարցաքննեց և մահուան դատապարտեց: Այս վճիռը գործադրուեցաւ քաղաքին էն մեծ հրապարակին վրայ, ճիշտ զիմացը այն Մայր եկեղեցիին որուն բեմէն տըւած էր իր պատգամները: Հրապարակը լեցուած էր ծովածաւալ բազմութեամբ, որուն մէջ մասը կ'որսախառար իսկ ուրիշ մաս մը արցունք կը թափէր: Սուրբ վանականը ասոնց մէջէն երգելով յուսալացաւ գէպ ի իր մահապատիժին վայրը, ուր սանդուխէ մը կախուած խաղաղութիւն սպաննուեցան: Այսպէս Սափօնարօլան՝ մեր Տէրոջման հաւատարմութեան և ճշմարտութեան համար

մարտիրոսացաւ, իր հոգիէն աւելի սիրած քաղաքին և ազգին միջոցաւ:

Ինչ է Սափօնարօլայի կեանքին նշանակութիւնն ու արժէքը: Շատ խաւար և բարոյապէս ինկած դաժու մը մէջ ճշմարիտ հերոսի մը նման ան ախոյանը հանդիսացաւ արդարութեան և ճշմարտութեան, լոյսի և կենդանի հաւատքի: Ճշմարիտ հայրենասէր մ'էր ան, բայց միեւնոյն տառն իրրեւ անվախ բարեկարգիչ մը իր հայրենիքին տկարութիւնն ու թերութիւնը կը տեսնէր և անոնց գէմ կը պայքարէր: Եւ ասոր համար իր կեանքը զոհեց: Ան կրնար ինքզինքը ազատել իր խօսքերը ետ առնելով, բայց Յիսուսի նման «ինքզինքը չկրցաւ ազատել», որպէսզի իր պարտութեամբը ճշմարտութիւնը յաղթող հանդիսանայ:

Դ. ՄԷՐԸՆ

ՃՇՄԱՐԻՏ ԱՂՈԹՔԸ

Այն որ Աստուծոյ կ'ազօթէ պէտք է իր խօսքերը Անոր ուղղէ իրր թէ Ան ներկայ է. քանզի Ան ամէն տեղ է, ամէն մարդուն մէջ և մասնաւորապէս արդարներու հոգիներուն մէջ կը գտնուի: Ուստի զԱյն փնտռեցէք ո'չ երկրի վրայ, ո'չ երկինքի մէջ, և ո'չ ուրիշ տեղ մը, այլ ձեր սիրտերուն մէջ և ըրէ՛ք այն մարգարէին պէս որ կ'ըսէ. «Ես պիտի լսուիմ ինչ որ Տէր Աստուծոյ պիտի խօսի:»

Ազօթքի մէջ մարդ կրնայ իր ուշադրութիւնը բաւերուն տալ, այս բոլորովին նիւթական բնոյթ ունեցող բան մ'է. ան կրնայ իր ուշադրութիւնը բաւերուն իմաստին տալ, և այս ուսումնասիրել է քան թէ ազօթի. և վերջապէս ան կրնայ իր բոլոր խորհուրդները Աստուծոյ ուղղել, և միայն այս է ճշմարիտ ազօթքը: Բոտերը կամ լեզուն նկատի առնել երբէք պէտք չէ, հոգին պէտք է ևսն վեր բարձրանայ և Աստուծոյ վրայ խոկուածով պէտք է յափշտակուի: Ճշմարիտ հաւատացեալը երբ այս վիճակին հաս-

նի, կը մոռնայ աշխարհը և անոր պէտքերը, ան երկնային երջանկութեան գրեթէ նախաստուերին մէջ կը գտնուի: Տգէտը և ուսեալը նոյն դիւրութեամբ կրնան բարձրութեան այս աստիճանին հասնիլ: Նոյնիսկ յաճախ կը պատահի որ առանց բառերը հասկնալու սաղմոս մը կրկնողը աւելի սուրբ աղօթք մը կը ընէ քան այն ուսեալը որ անոր իմաստը կրնայ բացատրել: Իրականին մէջ բառերը անհրաժեշտ չեն աղօթքի մը համար: Երբ մարդ իրապէս հոգիով յափշտակուած է բառերով խօսուած աղօթք մը արդիւք կը հանդիսանայ, և բոլորովին մտային աղօթք մը կ'ըլլայ: Այսպէս պարզ է տեսնել թէ որչափ մեծ սխալ մը կ'ընեն անոնք որ կ'որոշեն թէ այսչափ անդամ պէտք է աղօթել: Աստուած բառերու շատութենէն չ'ախորժիր, այլ ջերմեռանդ հոգիէն:

ՍԱՀՕՆԱՐՕԼԱ

ՆՈՐ ՔՐԻՍՏՈՍՆԵՐՈՒ ՊԵՏՔ ՈՒՆԻՆՔ

«Այո՛, կ'ընդունիմ թէ Յիսուս պատմութեան նշանաւոր մարդոցմէ մէկն է, թէ անիկա մեծ բարեկարգիչ մը եղաւ, թէ անիկա իտէալի մարդ էր և թէ լուսկզբունքներ քարոզեց: Բայց այդ ամէնը անցեալին կը պատկանին: Յիսուսն է վերջ մարդկութիւնը քստն դարերու քաղաքակրթութիւն մը կերտած է, հետեւաբար չի կրնար անցեալի մէջ փընտռել իր առաջնորդը, ատիկա ընկրկում կը նշանակէ: Հիմա նոր օրերու մէջ կ'ապրինք, որով նոր առաջնորդներու և նոր Քրիստոսներու պէտք ունինք. Օր. համար. Տարուին, Մարքոս, Լէւի և այլն:»

Անցեալինը այսպէս կ'արտայայտուէր երիտասարդ բարեկամ մը, որուն հետ խօսակցութիւն մը ունեցանք: Յայանի է թէ մեր մէջ քիչ չեն այսպէս մտածողները, մանաւանդ մտաւորական

և կուսակցական շրջանակներու մէջ: Քիչ չատ դպրոցի երես տեսնող մէկը կը քաշուի քրիստոնեայ կոչուելէ, մինչդեռ հպարտութեամբ ինքզինք կը դաւանի որպէս ընկերվարական, տարուինական, մարքսիսթ, իբր թէ Յիսուս Տարուինի կամ Մարքոսի չափ ալ չի կայ: Տեղը չէ՞ գոչելու ո՞վ դարք, ո՞վ բարք...:

Արդ, Յիսուսի քարոզած ճշմարտութիւններէն միայն մի քանինը յիշենք՝ տեսնելու համար թէ իրաւ անոնք հինցած են:

Մեր բարեկամը կ'ընդունի թէ Յիսուս իտէալի մարդն էր. ինչ էր սակայն իր իտէալը, այն մեծ տեսիլքը որուն կառչած մնաց Յիսուս իր կեանքին ամբողջ տեւողութեանը մէջ. — Աստուծոյ թագաւորութեան երկրի վրայ հաստատուելը, այսինքն առանց ցեղի և կրօնքի խտրութեան բոլոր մարդոց սիրով և իբր եղբայր միասին ապրիլը հօր Աստուծոյ հաղորդակցութեամբ: Յիսուս սիրոյ և խաղաղութեան մեծ առաքեալն էր: «Երկրի վրայ խաղաղութիւն, մարդոց մէջ հաճութիւն», երգեցին հրեշտակները:

Այս երազը իրականացնելու համար խորհրդածողութիւնը կը գումարուին, Լօգաթններ կը կնքուին, պատերազմի դէմ պատերազմ կը յայտարարուի, պատերազմը օրէնքէ դուրս կը հռչակուի, յիսունէ աւելի կառավարութեանց ներկայացուցիչները Լոզանի մէջ մեծ Արիսպագոս կը կազմեն: Ինչո՞ւ այս ամէնը. — «Երկրի վրայ խաղաղութիւն, մարդոց մէջ հաճութիւն» բերելու համար: Մարդկային հանճարը նոր սկսած է բողբոջելու, որպէսզի ան էարեանայ յաղթութեան և փառքի նոր գափնինի՛ր խելելանութեան ձեռքէն, պէտք ունի տեսնելու խաղաղութեան: Հիմա մարդկութիւնը աւելի քան երբեք ծարաւի է խաղաղութեան:

Սակայն ինչպէ՞ս պիտի կատարուի

Աստուծոյ թագաւորութիւնը երկրի վերայ: Իբր երկու հազար տարի առաջ Յիսուս պատասխանած է այս հարցումին ըսելով թէ պիտի եւնորհն ծնանիլ կարենալ տեսնելու համար Աստուծոյ թագաւորութիւնը եւ ըմբռնելու անոր վերաբերեալ բաները: Ըստ Յիսուսի մարդկութիւնը բարեկարգելու համար պէտք է անհատները բարեկարգել. եւ ասոր միակ միջոցն է վերստին ծնունդը: Մարդկութիւնը սակայն անտեսած է Յիսուսի այս հիմնական սկզբունքը եւ աշխատած ուրիշ միջոցներով խաղաղութիւն եւ երջանկութիւն ապահովելու: Պատմութիւնը կը վկայէ թէ մինչեւ հիմա փորձուած ամէն միջոց ձախողած է: Փորձուած երեք զլխաւոր միջոցներն են օրէնք, զիւանազրիտութիւն եւ դպրոց:

Համարապիւր օրերէն չատ առաջ օրէնքը կ'արգիլէր սպաննութիւնն ու զոհութիւնը. իսկուր սակայն, այս երկու չարիքներն ալ կան ու կը մնան այսօր: Դիւանազրիտութիւնն ալ մինչեւ հիմա չէ կրցած խաղաղութիւն պարգեւել աշխարհի, որովհետեւ ան հիմնուած է ոչ թէ արդարութեան այլ շահու վրայ: Գալով դպրոցին, ան ալ կը ձուլուած եւ պակաս զանուած է: Աշխարհի մեծագոյն պատերազմը աշխարհի լուսավոյն դպրոցներն ունեցող ազգէն — Գերմանիայէն փրթաւ: Ու պատերազմի վաղորդայնին Գերմանիոյ կրթական նախարարը կը յայտարարէր իր մէկ ճառին մէջ թէ այսուհետեւ Գերմանիոյ կրթական ծրագիրներուն հիմը պիտի ըլլայ սէր՝ հայրենիքէն հանդէպ, աստիճութիւն՝ թշնամիին հանդէպ:

Որքան տակաւին իջօրու է Յիսուսի մատնանշած միջոցը — վերստին ծնունդը: Ըստ այս սկզբունքին եւր մարդ վերստին ծնանի, ներսէն կը փոխուի. նոր մարդ կ'ըլլայ. Ալ հարկ չկայ իրեն ըսելու. մի՛ գողնար, մի՛ սպաննեք. ան արդէն չ'ընէր այդ բաները ինքնաբերա-

բար. այդ բաներուն փախալը մեռած է իր սրտին մէջ: Օրէնքը արդիւնքը արգիլելու կ'աշխատի, վերստին ծնունդը պատճառը մէջտեղէն կը վերցնէ:

Յիսուսի քարոզած մեծ ճշմարտութիւններէն մէկն ալ ոսկեղէն կանոնն է. «Ըրէ՛ք ուրիշին այնպէս ինչպէս կ'ուզէք որ ուրիշը ձեզի ընէ:» Յաճախ կ'ըսուի թէ Յիսուսէ առաջ Պուտոս արդէն տրւած էր այդ կանոնը իր հետեւորդներուն, թէ եւ ժխտական ձեւի տակ: Ամէն խորհող միտք զիտէ թէ քաղաքակրթութիւնը արդիւնքն է մտքի եւ բազուկի յարձակողական գործունէութեան ո՛չ թէ կրաւորականութեան եւ չէղծարարութեան: Միայն չգողնալը չի բաւեր, պէտք է նաեւ ունեցածէդ տաս: Միայն չատելը չի բաւեր, պէտք է նաեւ սիրես: Միայն չսպաննելը չի բաւեր, պէտք է նաեւ բուժես: Գործքով կատարուած մեղքերէն աւելի թերացումով կատարուած մեղքերն են որ կը չեղտէ Յիսուս ըսելով. «Անօթի էի ինծի հաց չտուիք, ծարաւի էի ինծի ջուր չտուիք» եւայլն:

Բարի Սամարացիին առաւելով Յիսուս կը սորվեցնէ օգնել ինկածին. բայց աւելի կարեւոր կէտ մըն ալ կը չեղտէ. — օգնել ինկածին առանց ցնդի եւ կրօնի խտրեան: Չարիքի արմատներէն մէկն է նեղամտութիւնն ու սպալնամտութիւնը: Յիսուս պայքարեցաւ հրեաներու «ընտրեալ ազգ»ի գազափարին դէմ: Սորվեցուց թէ բոլոր մարդիկ իրարու զըրացի եւ եղբայր են: Յիսուսի քով արուի եւ էզի, Յոյնի եւ Հրեայի տարբերութիւն չկայ: «Դուք բոլորդ ալ եղբայրներ էք» ըսաւ: Հինցա՞ծ է արդեօք այս գաղափարը:

«Առաջդ առ ետեւս եկուր» ը ուրիշ մեծ ճշմարտութիւն մըն է: Յիսուսի հետեւի կընշանակէ իտէալի նուիրուիլ: «Այն որ խաչը չի վերցնէր, ինծի արժանի չէ», այսինքն իսկաւ հետապնդողը պիտի ետապանքի եւ զոհողութեան հանդուրժի:

Պատմութիւնը կը վկայէ թէ մեծ զաւար-
տութիւնները մեծ զոհողութիւններ կը կտա-
տին: Ո՛րքան արիւն թափած են ազ-
գիւրը ազատութիւն ձեռք բերելու հա-
մար: Խղճի ազատութեան համար զո-
հուող նահատակներու և մարտիրոսնե-
րու պատմութիւնը վսեմ գիւլացալներդո-
ւթիւն մըն է: Գիտութիւնն ալ չսհեր
և զոհողութիւն կը պահանջէ:

«Ես եմ աշխարհի լոյսը» զոչելով Յի-
սուս իբր երկու հազար տարի առաջ
ինքչինք ներկայացուց որպէս մարդկու-
թեան միակ փրկիչը: Իր միլիոնաւոր
հեռուողները զինքը կ'ընդունին իբր
այգպէս: Աւելին կայ, ամէն դարու
մեծ մտքերը յայտարարած են թէ Յի-
սուսն է պատմութեան մեծագոյն գէմքը,
մեծագոյն տեսանողը և մարդկութեան
միակ առաջնորդը: Ի միջի այլոց յիշեմ
մի քանի վկայութիւններ՝ Յիսուսի հառ-
դէպօչ բարեկամացի գիրք բռնողներու
կողմէ:

Նարոլէոն կլըսէ. «Ես լաւ կը ճանչ-
նամ մարդը, ձեզի կ'ըսեմ թէ Յիսուս
մարդ չէր:»

Էրօֆ. Էլվուտ կ'ըսէ թէ ընկերու-
թիւնը մինչեւ հիմա ուրիշ միջոց չէ կրը-
ցած զանեւ մարդկութիւնը վերականգ-
նելու համար բացի Յիսուսի սկզբունք-
ներէն:

Մր. Ուէլս՝ ժամանակից Անգլիացի
փիլիսոփայ պատմագիր, առպէս կ'ար-
տայայտուի. «Ներկայ 20րդ դարու մէջ
մարդկութիւնը ի վիճակի չէ ըմբռնե-
լու Յիսուսի ուսուցումներուն խորու-
թիւնը. մեր մտքի հորիզոնէն չա՛տ
բարձր են անոր խտեւանները. և մեր սըր-
տերը չա՛տ փոքր այս Հսկային համար:»

Թող մեր բարեկամը լսէ Ռընանը, ժ-
ժ դարու փառքերէն մէկը: «Առանց
Յիսուսի ամէողջ պատմութիւնը անմեկ-
նելի է: Ապագան ինչ անակնկալ ալ
պատահած ըլլայ միշտ, աս որոշ է թէ
Յիսուս երբեք պիտի չգերազանցուի:

Իր կեանքը միշտ արցունք պիտի խլէ
աչքերէն, և իր չարչարանքը պիտի հա-
ւնցնէ սաերը, ու բոլոր դարերը պիտի
վկայէր թէ Յիսուսն է մեծ մէկը չէ ծնած:
Հանգստացի՛ր փառացի մէջ հիմայ ո՛վ
ազնիւ Հիմնադիր, քու գործդ աւարտած
է, ու քու թագաւորութիւնդ՝ հաստա-
տուած: Կատարեա՛լ Յաղթող մահու,
ախրացի՛ր հիմայ թագաւորութեանդ:»

Կրկնենք այս հարցումը նոր տարուան
սեմին վրայ. նոր Դրիստոսներու պէտք
ունի՞նք: «Ո՛չ», կ'ըսեն բոլոր դարերու
մեծ մտքերը: Յիսուսի տեղը բռնող
մէկը չէ ծնած և պիտի չի ծնի: Անիկա
չէ հինցած ու պիտի չհիննայ: «Յիսուս
նոյնն է երէկ, այսօր, վաղը և յաւի-
տեան:»

Արիստակերտ

ՅՈՎ. Հ. ՍՍՐԳԻՍԵԱՆ

ՆՈՐ ՏԱՐՈՒԱՅ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

Ծովեղբերայ սեպ ժայռերու վրայ շի-
նուած հիւղակի մը մէջ գիշերուան մու-
թին ՅԾ տարեկան կին մը աչքերը ժա-
մացոյցին յառած արագընթաց անցնող
տարւոյն վերջին բողբոջները կը համբեր...
Ազօտ լուսոյ շողիկներուն տակ նշմարե-
լի էր իր գեղեցկութիւնն և հոգւոյն ա-
նարատութիւնը:

Տասը տարիներէ ի վեր ձէնիֆէր
Ըսթօն, նոր տարուան առաջին գիշեր-
ները նոյն մտածմունքներով անցուցած
էր, խոկման գիշեր մը անցեալին և ա-
պագային մասին:

Ոտքի ելլելով պղտիկ դարակ մը բա-
ցաւ, որ իր մէջը կը պարունակէր ինը
հաս օրագրութեան գիրքեր, անցեալ
ինը տարուան բոլոր օրագրական զը-
րութիւններով: Եւ ահա ճիշդ կէս գի-
շերին հին տարին նոր տարւոյն իր հլ-
րածեղալ տալու պահուն ձէնիֆէր ալ՝
իննին վրան աւելցուց անցնող տարուան
գիրքը, և անմիջապէս նոր գիրք մը ա-
ռաւ: անոր առաջին էջին վրայ գրելու

իր որոշումները, ինչպէս որ գրած էր միւսներուն մէջ. և զրից հետեւեալ որոշումները նոր տարւածն համար.—

1. Ամեն օր գրութիւնը պիտի կարդամ Սր. Գիրքէն:

2. Ամեն օր քարի բուն մը պիտի ընեմ:

3. Ամեն օր մեկը պիտի ուրախացնեմ:

4. Բիխսոսի հաւաք հոգիներուն փըրկութեան պիտի աշխատիմ:

Երբ իր որոշումները զրից լինցուց, խորհեցաւ. տարիներէ ի վեր իր որոշումները միշտ այս չորս կէտերը եղած էին, արդեօք այս տարի ուրիշ նոր որոշում մէն ալ չէ՞ր կրնար ընել... Մէկէն մտաբերից տաջի օրուան ծեր ձկնորսի մը խօսքը որ իրեն ըսած էր, «Այս ծովեղերքը խիստ վտանգաւոր է, հոս պէտք է փարսս մը՝ զիշերտան և ալեաց մէջ նաւաւորները զգուշացնելու...»

Ճէնիֆէր սկսաւ խորհիլ թէ ինչ կըրնար ընել: Անմիջապէս նոր և սքանչելի գաղափար մ'ունեցաւ. մտածեց վառելու կարմիր ապակիով լամբար մը զէպի ծով նայող իր պատահանին մէջ, և ուրախանալով սկսաւ գրելու այս նոր որոշումը:—

5. Ամեն գիշեր կառմիր ընտրել շանրար մը պիտի դնեմ իմ պատահանին մէջ, որ անով կարենամ զգուշացնել նաւաստիները վտանգէ:

Ճէնիֆէր քսան տարեկան էր երբ իր ծնողքները մեռած էին. իր ապրուստը կը հայթափէր պէտիկ եկամուտէ մը որ մնացած էր իր հօրմէն: Այն իր որոշումներուն համեմատ ապրած էր բարձր կեանքով և միշտ ուրիշներու օգնելով և զանոնք ուրախացնելով:

Փետրուար ամսուն մթին և փոթորկոտ զիշերտան մը պահուն տեսաւ թէ լամբարին իւզը հասած էր. իր հիւզակը խանութէն բաւական հեռու էն, և սա տեղատարափ անծրեւին տակ երբէք կարելիութիւն մը չկար երթալու և իւզ գնելու: Այն պահ մը վաքանեցաւ, սա-

կայն յետոյ առաւ նօթագրութեան զիրքը, բացաւ առաջին էջը և հինգերորդ որոշումը կարդաց: Անմիջապէս ռաքի ելաւ, զուրս ալացաւ, թէպէտ զժուար էր բնութեան զէմ պայքարիլ, սակայն աներկիւզ իւզը ձեռքին յոգնած և թըրջած առն վերադարձաւ ու իր որոշումը կատարեց:

Յաջորդ օրն էր. քնութիւնը հանգարած էր. ճիշդ կէս օրին ձէնիֆէր նշմարեց մարդ մը որ իր պարտէզին մէջէն զէպի իր տունը ուղղուած կուգար: Չարմանքով սպասեց, ոգ էր, ինչու՞ կուգար... Անծանօթը մօտենալուն պէս բացազանչեց. «Բնչ է չէնիֆէր, զիս չեմ ճանչնար»: ձէնիֆէր մի քանի րոպէ վարանելէ ետքը զիացաւ. թէ ո՞վ էր անծանօթը և ըսաւ. «Եւրպէս չեմ ճանչնար, Բիշարան է որ վերադարձեր է»: Բիշարաւ խնդալով ըսաւ. «Այո՛, լաւ ճանչցար»: Բիշարաւ իրեն տարեկից եւուզ երիտասարդ մըն էր, որ իր մանկութեան խաղընկերն էր, տասը տարի առաջ նստով մեկնած էր իւր նաւաւոր:

Բիշարաւ ըսաւ. «Ես չէի կարծեր որ դուն հոս ես, ես եկայ որ իմ և ընկերներուս երախտադիտութիւնը յայտնեմ ձեզի, քանզի եթէ այս պատահանէն եկած կարմիր լոյսը չէր ըլլար, մենք մեր նստով միասին հիմայ ջարդ ու փշուր եղած պիտի ըլլաինք»...

Սիրելի՛ ընթերցող, ահա նոր տարւածն ասպարէզը բացուած է աչքիդ առջեւ: Չեմ ուզեր որ օգին մէջ աշտարակ շինելու չափ անխոհեմ ըլլաս, հապառնեցիր կենսական որոշումներ, անոնց հետ ուրախանալու, և ուրախացնելու...

ԵՆՈՎԻԿ ԿԼՕԲԿԼՕՋԵՍՆ

Պէյրուիթ.

ՆՈՐ ՏԱՐԻՆ

Մայր ժամանակի կոյս երկունքէն
Ծնաւ այս նոր տարին խնկելի,
Բերաւ մեզ պատգամ մ'երկինքէն
«Սիրել զիրար հինէն ուելի»

Կեանքի շրջան՝ լուռ սակայն արագ
Կը յաջորդէ միշտ նորը հինին,
Կեանք այս աշխարհի մարող ճրագ
Շամանթազն է կեանքի վերին:

Անցաւ հինը՝ եկաւ տարին նոր
Կեանքը խնդրի ու սփոփանքի,
Սակայն ո՞վ ընկեր, սա զիտցիր ուր
Հինն ու նորն ունին նոյն ոգի:

Նոր տարին հինը նոր չէիներ,
Թէ մաքով ես հինէն անբաժան.
Եթէ ունիս հին կեանք՝ հին ընկեր
Պիտի ընեն կեանքդ խիտ զաման:

Զգէ՛ հինը, ահա նոր տարի,
Անշուշտ հինէն կայտառ ու ստույշ,
Նոր յոյսով սիրով նա է առլի,
Թող պարուրէ քու կեանքդ ամբողջ:

Նոր սէր նոր յայգեր նոր օրերու
Հաւատքն անմեռ ու կաթողին
Տանին քեզ հին կեանքէդ շատ հետու
Որ ապրիս սիրոյ կեանքը յիսկին:

Երթան օրեր լացի ու սուգի
Որ հայտն փնտհը ըրին աւեր,
Նոր տարույ արեւին հետ ծագի
Սյուզէս յոյժ օրհնեալ նոր տարիներ:

Բհորֆիւնե Ա. Կ. ՊԼԲՊԼԲԵՆ

ՄԱՐԴՈՅ ԱՍՏՂԵՐՈՒ ՀԵՏ ՈՒՆԵՑԱԾ
ՅՍՐԱԲԵՐՈՒԹԻՒՆԸ

(Այս հատուածը ամփոփումն է Բրոֆ. Պրաունի, Ամերիկեան Համալսարանի աստղաբաշխութեան ուսուցչին ըրած մէկ բանախօսութեան:)

Յաւալ բան մէն է որ քաղաքակիթ աշխարհին մէջ ալ տակաւին աւել-

լորդապաշտութիւն գոյութիւն ունի:
Հիմայ Հոլանտայի մէջ ընկերութիւն մը կայ, որուն նպատակը աստղերուն նա-
յելով մարդոց բազմը կարգել է: Շա-
տեր հոն կը զիմեն իրենց աստղան
զիտնալու համար: Լոնչ կը կարծէք,
ստանկ բաներուն հաւատալ մարդուն
կեանքին հետ յարաբերութիւն ունի:
Այո՛, ձեր հաւատքը ձեր կեանքին վրայ
ահագին ազդեցութիւն ունի:

Օր մը Մարք Թուէյնի գիրքերէն մէ
կուն մնջ կարգայի որ աշխարհը, աստ-
ղերը, արեւը, ամէն բան քառուէ ըր յա-
ռաջ եկած են, և քառու ալ պիտի վե-
րածուին: Ուրիշ բնագէտ մէն ալ կը
զրէ որ կեանքը պատահական է: Սո
այս ելկու գաղափարներուն հետ չեմ
համաձայնիր, և նաեւ չեմ համաձայնիր
այն մարդոց հետ՝ որոնք կը հաւատան որ
աստղերը մարդոց հետ ուղղակի յարա-
բերութիւն ունին: Բայց կը համաձայ-
նիմ այն մարդոց հետ՝ որոնք կը հաւա-
տան թէ աստղերն մարդոց հետ անուղ-
ղակի յարաբերութիւն ունին: Այդ յա-
րաբերութիւնը այս է.

Եջ շատ մը պոյժաւ գիշերներ անտ-
ղերը զիտելով անոնց մէջ հետեւեալ բա-
ները նշմարեցի. (1). Շարժում, (2).
Վեհափառութիւն, (3) Կարգ ու Կանոն.
(4). Անձնականութիւն, (5). Զարգա-
յում, (6). Անհունութիւն, (7). Յաւի-
տենականութիւն: Այս բաները նշմա-
րելէն վերջ անկարելի է հաւատալ որ
տիեզերքը և կեանքը քառուէ մը կամ
պատահականօրէն յառաջ եկած ըլլան:
Եւ ես վստահ եմ որ ասոնց հետեւ մեծ
Միտք մը կայ: Այս Միտքը ես Աստ-
ուած կը կոչեմ: Եւ այս Միտքէն գուն
և ես ալ ունինք: Ահա հոս կը կայա-
նայ աստղերուն և մարդոց միջև եղած
յարաբերութիւնը — Մենք ունինք մեր
էութեան մէջ այն Միտքէն՝ որ բոլոր
տիեզերքը կը կառավարէ:

Ուրեմն, ես չեմ հաւատար նախայիշեալ

մարդոց պէս որոնք կ'ըսեն թէ կեանքը քառսէ յառաջ եկաւ, բայց եւ կը հաւատամ այդ Հրեային պէս որ կը բացագանչէ. «Ով Տէր մեր Տէրը, ինչ փառաւոր է քու անոնց բոլոր երկրի վրայ... Ամէն բան անոր (մարդուն) ոտքերուն տակ գրիր:»

Ամփոփեց Մ. ՇՆՈՐՀՕՔԵԱՆ.

ՏԵՂԱԿԱՆ ԿԵԱՆՔ

Տիար Մարտիրոս Փանոսեան, Ազիզիէ Հայ Աւետ. եկեղեցիի սիրուած սարկաւազը, Դեկ. 7ի զիշերը, ժամը 9ին անդարձ մեկնեցաւ այս աշխարհէն, հազիւ 54 տարեկան եղած: Հանգուցեալը ծնած է Նիկիոյ, ուր նախնական ուսումը ասնելէ վերջ աստիճան մը ճինանահան գոլէճը ուսած, ապա իր բնավայրը հաստատուելով իր եկեղեցիին մէջ իրր ժողովական և սարկաւազ գործօն դեր մը ունեցած է: Իր երկտասարդ տարիքին մէջ ստամոքսային ախտով մը վարակուած է, որուն տառապանքները 25 երկար տարիներ մինչև իր մահը անտըրառունջ կրած է: Այս համբերող, միշտ գոհ, խաղաղ և ժպտուն հիւանդը իրեն այցելողներուն մխիթարութիւն և ոյժ ներշնչած է: Մեր ցաւակցութիւնները իր պարագաներուն:

Փրօֆ. Զ. Ա. Պէզճեանի մի քանի շաբաթուայ ներկայութիւնը մեր մէջ նախապատեհութեան կեանքը վերջի-ջիւ տուաւ, վայելիւ տալով միզի անցեալի քաղցր ապրումները: Յարգելի փրօֆ. իր բարեկամներէն և աշակերտներէն յարգալիւր ընդունելութեան մը արժանացաւ: Բարեկամական, ընտանեկան, պաշտօնական չըջանալիներու մէջ փրօֆ. ասիւթը ունեցաւ տեսնելու իր նախկին շատ մը սաները և բարեկամները, որոնք պարզապէս ուրախ էին լսել ծանօթ ձայնը իր թելադրիչ և համակրալի պատգամներով: Ընտանեկան և մտերմական կարգ մը չըջա-

նակներէն գատ Ուսումնասիրաց Ընկերութիւնը, Հայ Աւետ. եկեղեցին և Կ. թ. Գոլէճի Ուսումնասիրատներու Միութիւնը թէյասեղաններ տուին ի պատիւ փրօֆ. ին: Աս վերջինը տեղի ունեցաւ Ազիզիէի Հայ Աւետ. եկեղեցւոյ վարի սրահը Դեկ. 22ին, հալէպարնակ գրեթէ բոլոր ուսումնասիրատները և անոնց տիկինները, մօտաւորապէս 90 հոգի, ներկայ էին: Հաւաքոյթին նախագահը, Վեր. Կ. Յարութիւնեան, փրօֆ. իր բազմակողմանի գործիչ մը ներկայացնելէ վերջ գայն բեմ հրաւիրեց:

«Շատ ուրախալի պարագայ մըն է», ըսաւ փրօֆ. իր, «մեծ թիւով Կ. թ. Գոլէճի ուսումնասիրատներ պանել հոս: Վերջին գէպերու պատճառաւ մեր կորսուած ուսումնասիրատները թիւը պակաս կը գտնենք երբ գայն բազմատենք միւս գոլէճներու ունեցած կորուստին հետ: Եթէ առիթը ունենայինք շատ հետաքրքրական պիտի ըլլար լսել իւրաքանչիւր ուսումնասիրտին պատմութիւնը: Մենք վերապրողներս մեծ պատասխանատուութեան մը տակ կը գտնուինք, և կը յուսամ որ հոս եղողները գիտակից են իրենց այս պատասխանատուութեան: Այսօր մեր ազգային պէտքերը շատ աւելի են քան երբէք եղած են: Գոլէճի ներկայ գոյութիւնը շնորհաւորելի է և Ուսումնասիրտներու Միութիւնը պէտք է օգնէ անոր:»

Ապա ժամանակը անցաւ շատ զբաւառնալի խօսակցութիւններով, համեմուած ուսանողական կեանքի գուարճալի անէքսթներով: Պէտք է յիշել հոս գոլէճի նախագահին, Տր. Ժ. Է. Մէրըլի խօսքերը, ակնարկելով վերջին քննադատութիւններուն, «որոնք», ըսաւ նախագահը, «արդիւնքն են երկու պատճառներու — տղիւնութեան և սամկավարական քաղաքականութեան: Մեր ձաւոր Արեւելքի Ամերիկեան գոլէճներուն մասին գրուած գիրք մը տեսայ, որուն մէջ

ամենէն շատ տեղ տրուած էր Կ. թ. Գո-
լէճին: Հեղինակը մեր գոլէճին մասին
խօսելով կ'ըսէր թէ ան բացառիկ և կա-
րեւոր զիրք մ'ունի և ապագայ կը խոս-
տանայ, քանզի այն միակ հաստատու-
թիւնն է որուն վարչութեան մէջ տեղա-
ցիւնները խոշոր բաժին մ'ունին: Մենք
պէտք չէ անտեսենք այս պարագան:

Կէս զիշեր էր երբ ներկաները ցրուե-
ցան զոհ տրամադրութեան մը տակ:
Մասնաւորապէս շնորհաւորելի է կար-
գադիր մասնախումբը իր կանոնաւոր և
ճշդակաւ տշխատանքին համար:

Գիկ. 23ը նշանակելի օր մ'եղաւ
Ուրֆայի Բող. Ասորիներու և կեղեցիին
համար: Նոյն օրը Ազիյի խաչ Աւետ.
եկեղեցիի Ե. Ք. Ջանից երկու միութիւն-
ներէն 35 երկսես երիտասարդներ իրենց
համակրանքը յայտնեցին, իրենց զեղե-
ցիկ երգերով և նուագներով: Ազգայնաց
բաժնին վարիչը Տիկ. Ա. Փօլատեան
Ե. Ք. Ջանից միութիւնը ներկայացուց,
խօսելով անոր ծագումին, պատմու-
թեան և նպատակին մասին: Իսկ ման-
չերու բաժնին վարիչը Տիար Կ. Գրգըր
եան բնմէն քարոյ մը տուաւ: Ժողով-
ութիւնը շատ զոհ ապաստութեան տակ
բաժնուեցաւ:

ԳԻՏԱԿԱՆ ԳՐՈՆԻԿ

ԽՈՏ ՄԸ ՈՐ ՄԺԵՂՆԵՐԸ Կ'ՈՊԱՆԵՆԷ

Մ. Նահանգներու մէջ բուննող սէզ
մը — որ ջրիմուռի բնտանիքէն ըլլալ կը
կարծուի — գտնուած է, որ Գօրնէլ հա-
մալսարանի գիտուններուն յայտնածին
համեմատ բոլոր մեղիները կ'սպաննէ:
Այս երեւոյթը, և բոյսը ինքը անմեկ-
նելի գաղտնիք մ'է:

ՊԱՏԵՐԱԶՄԸ ՆՈՒԱԶ ՍՍՐՍԱՓԵԼԻ

ԸՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Տը. Կուսթով Էկլոֆ անուն գիտուն
մը կ'ըսէ թէ ներկայիս գիտունները կը

ծրագրեն զգայազրկիչ դեղերու միջոցաւ
պատերազմին արհաւիրքը պակսեցնե-
լու համար: Հազար սաւառնակներ իւ-
րաքանչիւրը 1500 հոգա քլօրօֆօրմով
կընան երեք միլիօնոց բազմութիւն մը
քնացնել, զգայազրկ ընել, և պատե-
րագմը խաղաղութեամբ լրացնել:

ԵԳԻՊՏՈՍԻ ՇԱՂԻԿՆԵՐԸ

Եգիպտոսի 5000 տարիներու հնու-
թիւն ունեցող գերեզմաններուն մէջ ծա-
ղիկներ գտնուած են, որոնք ներկայիս
ալ նեղոսի ափերը կը զարդարեն: Այն
ծաղիկի տեսակները, զորոնք մանուկ
Մովսէս կը քաղէր, և զորոնք Արահա-
մէ 1000 տարի առաջ մեռնող մարդե-
րուն վիզերը և կուրծքերը զնկու հա-
մար կը զարմածէին, տակաւին կը շարու-
նակեն ծաղիկը:

ՄԱՐԴԸ ԱՅՆ Է ԻՆՉ ՈՐ Կ'ՈՒՏԷ

Տարբալոյճները՝ որոնք սնունդի ազ-
դեցութիւնը կ'ուսուցնասիրեն, կ'ըսեն
թէ մարդ կը փոխուի իր վրան ապրած
հոգին համեմատ: Կարգ մը հոգեր կան
որոնք մարմնի պէտք եղող այս կամ այն
տարրէն չուրկ են: Հետեւաբար անոնց
վրայ բուննող պոտիզները և ընդհանր
չեն պարունակել այդ տարրերը, և զա-
նոնք սաւառ մարդերը ֆիզիկական և
հոգեկան թերութիւններ, տկարութիւն-
ներ և յատկութիւններ կը ցուցնեն:
Ձուլիցերիոյ կարգ մը տեղերուն մէջ,
զոր օրինակ, կարճատեւութիւնը և
տկարամտութիւնը, կ'ըսեն քիմիազէտ-
ները, այդ տեղերու հոգին պէտք եղած
քանակութեամբ աջօրէն չպարունակելուն
արդիւնքն են: Աշխարհիս ուրիշ մա-
սերուն մէջ հոգը չի պարունակել բա-
ւականաչափ ծծումբ, կիր կամ լուսած-
նային նիւթեր, որոնց պակասութիւնը
պատճառ կ'ըլլայ ցեղային կարգ մը
յատկանիշներու:

ՅԻՍՆԱՄԵԱՅ ՅՈՒԵԼԵԱՆ ՔԱՀԱՆԱՅՈՒԹԵԱՆ

ԵՐՈՒՍԱԳԷՄԻ Ս. ՊԱՏՐԻԱՐԺ

ԱՄԵՆ. Տ. ԵՂԻՇԷ Ս. ԱՐԲԵՊՍԻ. ԴՈՒՐԵԱՆ

1879-1929

ՅԱԼԵՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Հայաստանի այց հեղեղներն, իբրեւ
կեղծոն հոգեւոր գաստիարակութեանը
Հայ ժողովուրդին, իր կատարած զերը
կը ցայտեցնէ իր ա՛յն հոգեւորականնե-
րուն վրայ, որոնք լաւ ըմբռնած են ի-
րենց քարոզչական և ուսուցչական
պաշտօնին բոլոր կողմերը և կարող եղած
են արդիւնաւորիւ իրենց աշխատանքը
տարիներու ընթացքին:

Ամեն. Դուրեան Սրբաւան, զուտ
հոգեւորական տեսակէտէն գիտելով, ե-
ղած է անլուելի Քարոզիչը Ս. Աւետա-
րանին, տալով իր քարոզելու արուես-
տին օժութիւն մը ո՛չ միայն իմաստա-
լից խօսքերով և բանաստեղծական խո-
յանքով այլև հայերէն լեզուին գրական
զեղեցիկութիւնով: Գրադէտը, Բանաս-
տեղծը, Իմաստասէրը, Աւետարանիչը
միանալով հոգեւորական Դուրեանի մէջ՝
հանդիսացուցած են զինքն Հայց. Եկե-
ղեցւոյ բեմին վրայ լաւագոյն քարոզիչ-
ներէն մէկը: Իբրեւ բանաստեղծ իսկ
միշտ Աւետարանը և Փրկչին կեանքը
երգած է Դուրեան իր քերթուածներուն
մ.ջ, ո՛ր նոր ներշնչում և նոր արտա-
յայտութիւններ առած են աւետարանա-
կան դէմքեր և զրուագներ: Ասկէ վատ
Դուրեան Սրբաւանի բեմին նկարագիրը
եղած է միջտակէն վի՛ր բարձրացնել ուն-
կնորութեան մակարդակը, և ասոր նը-
պաստած են թէ՛ իր յարատեւ քս ըողջու-
թիւնը և թէ՛ իր լուսաւորող ուսուցչու-
թիւնը միեւնոյն ատեն, այնպէս որ Ա-
ւետարանը արտաոքայլած է շարունակ

իր բեմին վրայ և իր զրէն տակ:

Անաղարտ հաւատարմութիւնը իր
սրբազան կոչումին, չոր պահած է իր
Քահանայութեան այս յիսուն տարինե-
րուն մէջ, իր անձին շուրջ շինած է
մաքուր հոգեւորականի համբաւը, և
իր անշահասէր ոգին և նուիրեալ զոր-
ծունէութիւնը հայ եկեղեցականի սքե-
մին տակ՝ եղած է զմայլելի և օրինա-
կելի իրականութիւն մը, զինքը մօտէն
ճանչցողներուն համար:

Ամեն. Դուրեան Սրբաւանի Քահա-
նայութիւնը այնպէս սերտիւ լծորդուած
է իր Ուսուցչութեան հետ որ անկարելի
է գտաել մ.կը միւսէն:

Իբրեւ Վարդապետ Հայց. Եկեղեցւոյ,
Ան եղած է գերազանցապէս ուսուցչին
ու գաստիարակը, թէ՛ իր քահանայա-
կան ձեռնադրութենէն յառաջ և թէ՛
ետքը. ուսուցիչը ինչպէս եկեղեցւոյ
սրբազան բեմին, նոյնպէս զպրօյներու
գաստխօսական աթոռներուն վրայ, իբ-
րեւ Քարոզիչ-Ուսուցիչ Պարտիզակի մէջ,
իբրեւ Վերատեսուչ-Վանահայր Արմաշու
Դպրեմանքին մէջ, իբրեւ Առաջնորդ-
Ուսուցիչ Իգմիրի առաջնորդութեան մի-
ջոյն, իբրեւ նախկին Պատրիարք Կ.
Պոլսի և ուսուցիչ Կ. Պոլսի վարժարան-
ներուն մէջ, և այժմ ալ իբրեւ Պատ-
րիարք-Ուսուցիչ Երուսաղէմի պատրիար-
քական աթոռին վրայ:

Ժամանակակից հայ սերունդին մէջ
բազմաթիւ անձեր, աշխարհական թէ
եկեղեցական, իրենց մտաւոր և հոգեւոր

գորգացումին եւ պատրաստութեան ատոգները կը պարտին Ամեն. Դուրեան Սրբազանի ուսուցչական տաղանդին, որ յետոյ տարիներու ընթացքին, անընդհատ ու անխափան ուսումնասիրութեամբ մշակած է իր նախընտրած նիւթերը:

Հայաստանեայց Եկեղեցւոյ ծոցին մէջ արգասաւորուած եւ օրհնուած այսպիսի երկարամեայ ծառայութիւն մը, կ'արժէր որ յիշատակուէր հանդիսաւոր տոթով մը, ո՛չ միայն ի նոյն ազգային արգար պնդատանջի մը, այլեւ ի քաջալերութիւն Հայ Եկեղեցւոյ հոգեւորական գասուն:

Այս պարտքը զգացին Ս. Պատրիարք Հօր աշակերտները, եւ Ս. Աթոռիս Տնօրէն Ժողովը ստանձնելով զայն, որոշեց Ն. Ամեն. Սրբազնութեան Քահանայական Չեանդութեան յիսներորդ տարեկարձին առթիւ յիշատակել իր կէս դարու եկեղեցական ու կրթական ծառայութիւնը եւ յորելինական հանդէսով մը սօնախմբել զայն:

Այս նպատակով Յորելինական Կեդրոնական Յանձնաժողով մը կազմուեցաւ Ս. Աթոռիս մէջ, որ, Յորելեանը հոգակելու համար 1929ին հետեւեալ կարգադրութիւնները ըրաւ: Յանձնաժողովին Պատուակալ Նախագահն է Գեր. Տ. Թ. Արքեպս. Գուշակեան, Ապետը՝ Գեր. Տ. Մ. Եպս. Նշանեան, Աղպիրը՝ Գեր. Տ. Բ. Եպս. Կիւլէտէրեան, Գանձապետը՝ Գեր. Տ. Մ. Եպս. Աղաւեստի, Խորհրդականները՝ Գեր. Տ. Մ. Եպս. Գալըզեան, Հօգ. Տ. Կ. Վրդ. Իսրայէլեան, Մեծ. Տիար Կ. Նուրեան եւ Մեծ. Տիար Գ. Մխալեան:

Ա.— Հրատարակել հատոր մը 1929 տարւոյ ընթացքին, որ պիտի բովանդակէ Ամեն. Դուրեան Սրբազանի աշակերտներուն, եկեղեցական թէ աշխարհական, բարեկամներուն եւ հիպոքոնիստներուն պնդատմաները, տպագր-

ութիւնները, յուշիկները, ետյն: Հատորին սկիզբը պիտի գրուի Ամենապատիւ Յորելեանին լման կենսագրութիւնը, եւ զործը պիտի պատկերազարդուի իր կեանքին այլ եւ այլ հանգրտանները լիջնոցով լուսանկարներով(*):

Բ.— Յորելեանի յիշատակին կատարեցանել Մատենադարանի յատուկ շէնք մը Ս. Յակոբի շրջաքաղին մէջ, ԳՈՒՐՆԱՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ անունով:

Գ.— Յորելեանի հանդէսները պիտի բացնելու համար, յարմարագոյն կեդրոններու մէջ պիտի կազմուին Յորելեանական Օժանդակ Յանձնաժողովներ:

Դ.— Յորելեանի հանդէսները պիտի հոգակուին 1929 Հոկտ. 26, Շր. Նոր տօմարով, Թարգմանչաց տօնին:

(*) Սոյն հրատարակելի հատորին վերջը պիտի գրուի Սրբազան Յորելեանին եկեղեցական թէ աշխարհական աշակերտներուն անուանացանկը. ուստի այս առթիւ կոչ կ'ընենք բոլոր անոնց, որ աշակերտած են Ն. Բ. Սրբազնութեան, գրով մը հաղորդել Կեդրոնական Յանձնաժողովին թէ ե՞րբ աշակերտած են Դուրեանին, ո՞ր գաղափար մէջ եւ ո՞ր չափ աւելած է իրենց աշակերտութեան շրջանը:

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ

Ա.— Ամեն. Յորելեանի աշակերտներուն եւ աչոյց կողմէն գրուելիք գրութիւնները պիտի ե դրիկը ՍԻՕՆԻ հասցեով՝ մինչեւ 1929 Մայիսի վերջը:

Բ.— Իսկ ընդ կառուցանելի Մատենադարանին հասնող դրամական նպաստ մը սալու յօծարող ազգայինները, կրնան իրենց նշանակները դրիկը Յորելեանական Կեդրոնական Յանձնաժողովին հասցիին:

COMITÉ CENTRAL DE JUBILÉ TOURIAN

PATRIACAT-ARMÉNIEN

JERUSALEM - PALESTINE

ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ ԷԶԸ

ԳԱՆՃԱՐ ՊԱՊՈՒԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ
(Շարունակութիւն)

Պապուի հիմնական կեանքը իրեն համար նոր ու տարօրինակ կեանք մ'էր, թէև ոչ ապիրջանիկ. իր կերակուրը հինէն աւելի և շատ կանոնաւոր կերպով կը ստանար: Ան կը սիրէր արգելանոցին պարտէզը՝ ուր զոյնգոյն ծաղիկներ աւատ կ'ածէին: Ամանը՝ որով պարտէզը ջուր կը կրէր՝ խիստ ծանր էր, բայց հոգը չէր, քանի որ անոր շնորհիւ կը տեսնէր իր սիրական ծաղիկները: Իսկ կէսօրներէն վերջ շարունակ կը նստէր զոյնգոյն թերերուն գէղերուն քով՝ ու կը գիտէր թէ ինչպէ՛ս անոնց բաղադրութենէն յառաջ կուգային գեղեցիկ երգներանգ կապերաներն ու գործերը: Սակայն սա անարկու բարձր պատը . . . որ հսկայ դէի նման կիցած կը բաժնէր զինքը իր հարազատ միջավայրէն: Ա՛խ, այն լեռներն ու ձորերը, ընդարձակ դաշտերը, մարգագետիններն ու անտառները, թռչուններն ու զապանները՝ որոնք իր կեանքին անհրաժեշտութիւններն էին:

Պէտք է զիտնալ որ Պապու ոճրագործ մըն էր այն միակ պատճառով որ ինք Հնդկաստանի Քանճար կոչուած վաչկատու ցեղին կը պատկանէր: Հին դարերէ ի վեր իրենց կեանքի գործը (profession) աւագակութիւն կ'աւելար՝ ոչ թէ փոքր աւագակութիւն՝ այլ ահարկու ձեռնարկներ՝ որու միջոցին ի պահանջի հարկին սպաննութիւն ևս ներկի էր: Իր նախահայրերը նշանաւոր էին լեռնային ճամբաներու մէջ իրենց կատարած խիստ յանգուզն քաջագործութեամբ. անոնք չէին խորհրթէ աւսիկայ ոճիր է. ընդհակառակը՝ զայն խելացութիւն և քաջութիւն կը նկատէին. քաջը և զօրաւորը ամէն իրաւունք ունէր իր ուղիով առնելու ամէն անոնց՝

մէ՛ որ իրենցմէ աւելի տկար ըլլալու յիմարութիւնն ունէին: Իսկ հիմայ, աւա՛ղ, ժամանակները փոխուած էին: Այս ճերմակ մարգերուն կառավարութիւնը կրակէ նոր կառքեր հնարած էր որոնք երկաթէ զիծերու վրայէն կը փախչէին աներեակայիլի արագութեամբ, առանց ձիու կամ եզերու: Ամենէն գէշը սա էր որ մոգական թելեր հնարեր էին, որոնք այնքան բարձր կը խօսէին որ մէկ ակնթարթի մէջ մղոններ հեռուէն կրնային լսուիլ: Այո՛, Քանճարներուն չար օրերը եկեր էին, և իւր թէ այս բոլոր զիւային նորութիւնները բաւական չէին, կառավարութիւնը մասնաւոր զինուորական ոյժով մը զիրենք կը հալածէր, ջանալով զանոնք քաղաքներու մէջ բանտարկել, որպէս զի շատ ապուշ ու թուլ կերպով ապրուստ ճառել սորվին: Այո՛, ալ իրենց ձեռքը տաքը կապուած էր այնքան ամուր որ Պապուին մեծ հայրը փոքր զէպքի մը հետեւանօք ցիկտանա քարտուած էր, իսկ իրենք քսան տարուան համար բանտարկուած այս արգելանոցին մէջ:

* *

Պապու իրր վեց ամիս բանտը մնացած էր իրր այցելու մը եկաւ — երկտառարգ ճերմակ մը, փայլուն կապոյտ աչքերով: Վերակայուին առաջնորդութեամբը այցելուն եկաւ, կայնեցաւ և ուշադրութեամբ տպուն կընայէր մինչ ան գեղին թելի մը հանգոյցը քակելով զրազած էր:

«Աս տղան ի՛նչ գըժ ունի հոս,» հարցուց օտարականը:

«Մեծ ոճիր.» պատասխանեց վերակացուն, «Անշուշտ կը յիշէք անցեալ տարուան այն զգայացունց զէպքը՝ երբ Քանճար խումր մը ոստիկանապետին տան վրայ գիշերանց յարձակում գործեցին, սպաննելով իր զանապանը ու վիրաւորելով զինքը:»

